**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 03-ը մայիս 2018թ.
ժամը 12⁰⁰

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Չ. Մելիքյան

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպարտային միջոցներով ապահովման բաժնի պետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ոսկանյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևավորման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևավորման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:

***« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Տ. Բաղդասարյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի 1 ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Տ. Բաղդասարյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «իրային միջոցներ» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Յուտեկ» ՍՊԸ |
| 2 | «Ինֆորմուգա» ՍՊԸ |
| 3 | «Էյչ Ջի Էյչ Քոմփանի» ՍՊԸ |
| 4 | «ՄԱԴԷԼ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:.*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրչավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Տ. Բաղդասարյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 **«Էյչ Ջի Էյչ Քոմփանի» ՍՊԸ** -ի հայտում առակա է եղել անհամապատասխանություն մասնավորապես.

- ներկայացված հավելված 2.1-ում նշված չէ լրացված փաստաթղթի անվանումը:

**«Ինֆորմուգա» ՍՊԸ**- ի հայտում առակա է եղել անհամապատասխանություն մասնավորապես.

ներկայացված հավելված 2.1-ը լրացված չէ

**«Յուտեկ» ՍՊԸ-ի** հայտում առակա է եղել անհամապատասխանություն մասնավորապես.

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով նախատեսված հավելված 4-ը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով /08.05.2018թ./ կասեցրել է հայտերի գնահատման նիստը:

11.05.09.2018թ. **«Յուտեկ» ՍՊԸ**-ն և **«Ինֆորմուլա» ՍՊԸ-ները** սահմանված ժամկետում չեն շտկել անհամապատասխանություն ուստի գնահատող հանձնաժողովը մերժել **«Յուտեկ» ՍՊԸ**-ն և **«Ինֆորմուլա» ՍՊԸ-ների** հայտերը: **«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը գնահատել է բավարար:

2.4 «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ և <Մաղէլ> ՍՊԸ հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Տ. Սարգսանյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ, «ՄԱԴԷԼ» ՍՊԸ.

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակ | Պլանավորած նախահաշվային գումար | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպություններ | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Վրանածածկեր ՌԻԱԶ - 31512 | հատ | 50 | 2500000 | | | | | | |
| 2 | Վրանածածկեր ԶԻԼ-131 | հատ | 30 | 3900000 | | | | | | |
| 3 | Ծածկոց 122 մմ Դ-30 ի | հատ | 48 | 2736000 | «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ | 2592000 | | | | |
| 4 | Ծածկոց 152 մմ Դ-20-ի | հատ | 48 | 2424000 | «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ | 2299200 | | | | |
| 5 | Ծածկոց 152 մմ Դ-1-ի | հատ | 12 | 546000 | «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ | 516000 | | | | |
| 6 | Ծածկոց 122 մմ ՄՄ 21-ի | հատ | 24 | 4564800 | «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ | 4320000 | | | | |
| 7 | Ներքնակ (200*90*2) | հատ | 130 | 520000 | | | | «ՄԱԴԷԼ» ՍՊԸ | 520000 | 624000 |
| 8 | Ներքնակ (200*140*2) | հատ | 4 | 24000 | | | | «ՄԱԴԷԼ» ՍՊԸ | 22000 | 26400 |
| 9 | Ներքնակ (200*160*2) | հատ | 18 | 126000 | | | | «ՄԱԴԷԼ» ՍՊԸ | 108000 | 129600 |
| 10 | Ներքնակ (200*180*2) | հատ | 32 | 256000 | | | | «ՄԱԴԷԼ» ՍՊԸ | 240000 | 288000 |
| 11 | Վերմակ (210*150*5) | հատ | 140 | 980000 | «ՄԱԴԷԼ» ՍՊԸ | 770000 | 924000 | | | |
| 12 | բարձ սինտեպոնից | հատ | 150 | 450000 | | | | | | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ են վարվել 7,8,9,10-րդ չափաբաժինների մասով /սահմանված կարգով ծանուցվել է հայտ ներկայացված մասնակցի նշված չափաբաժինների մասով/: 18.05.2018թ «ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն բանակցության չի ներկայացել և իր գնային առաջարկը թողել է ամփոփոխ: Գնահատող հանձնաժողովը ՀՀ <Գնումների մասին> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի վերոնշյալ չափաբաժինները հայտարարեց չկայացած 1,2,7,8,9,10-րդ չափաբաժինները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

[illegible]

4.1 **24.05.2018թ.** «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 3,4,5,6 -ին չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ –ն, 11-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՄԱԴԷԼ» ՍՊԸ -ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

[illegible]

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Տ. Բաղդասարյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/33» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող** | Վ. Գասպարյան |
| **Գնահատող** | Գ. Ոսկանյան |
| **Գնահատող** | Զ.Մելիքյան |
| **Գնահատող** | Ս. Նիկոլյան |
| **Գնահատող** | Կ. Բրուտյան |
| **Գնումները համակարգող՝** | Տ. Բաղդասարյան |